

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի 2014 թվականի գործունեության ամփոփ հաշվետվություն

2014 թվականի ընթացքում ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի գործունեության հիմնական ուղղություններն են եղել.

1. Իրավական ակտերի մշակում՝

1.1 ՀՀ կառավարություն է ներկայացվել

- «Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման 2015-2020 թվականների գերակայությունները սահմանելու, դրանց հակիրճ նկարագրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի N 640-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագծով սահմանվում են գիտության և տեխնիկայի զարգացման 2015-2020 թվականների հետևյալ գերակայությունները՝ հայագիտություն, գիտություններ կյանքի մասին, արդյունավետ և անվտանգ էներգետիկա, հիմնական արդյունավետ տեխնոլոգիաներ, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ, տիեզերքի ուսումնասիրություն, Երկրի մասին գիտություններ, խնայողական բնօգտագործում, գիտատեխնիկական և սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն հիմնախնդիրների լուծմանն ուղղված հիմնարար հետազոտություններ:

- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի N 2-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում ընդգրկված գիտաշխատողներին գիտական աստիճանի համար հավելվածարների չափը սահմանել գիտությունների դոկտորներին 50 000 ՀՀ դրամ, գիտությունների թեկնածուներին՝ 25 000 ՀՀ դրամ:

- «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման հայեցակարգին և հայեցակարգից բխող միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի լրամշակված տարբերակը: Հայեցակարգն ուղղված է գիտության ոլորտի ֆինանսավորման ձևերը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն, ֆինանսավորման ծավալների ավելացմանը, գիտական աշխատողների աշխատանքային և սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը:

- «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի լրամշակված տարբերակը, որով սահմանվելու են մի շարք հասկացություններ (հետազոտական համալսարան, ազգային գիտական լաբորատորիա, գիտական դրամաշնորհ), ֆինանսավորման ձևերը համապատասխանեցվելու են գիտության և տեխնիկայի զարգացման արդի չափանիշներին, ինչպես նաև՝ հստակեցվելու է լիազոր մարմնի իրավասությունների շրջանակը:

1.2 Ազգային ժողովում է «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ երկրորդ ընթերցմամբ քննարկելու համար: Նախագծի ընդունումը հնարավորություն կտա ներդնել գիտական և գիտատեխնիկական ծրագրերի/թեմաների ընտրության ու հաշվետվությունների գնահատման ժամանակակից եղանակ, կնպաստի միջազգային մակարդակին համապատասխան

նախագծերի ընտրությանն ու արդյունավետ իրականացմանը և արդյունքում գիտության ոլորտի ֆինանսավորման արդյունավետության բարձրացմանը:

1.3 Մշակվել է «Գիտության ոլորտ երիտասարդ կադրերի ներգրավման ծրագիրը», որով նախատեսվում է իրականացնել գիտության ոլորտի աշխատողների սոցիալ-տնտեսական և աշխատանքային պայմանների բարելավմանն ուղղված միջոցառումներ: ՀՀ կառավարության քննարկմանը կներկայացվի Գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման հայեցակարգի ընդունումից հետո:

2. Գիտական ծրագրերի մրցույթների կազմակերպում.

2.1. Հայտարարվել և կազմակերպվել է գիտական ծրագրերի 5 մրցույթ.

- ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության միջազգային մրցույթ: Ստացվել է 91 հայտ:

- Բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթ: Ստացվել է 284 հայտ: Հաղթող ճանաչված 100 գիտնականները մեկ տարի ստանալու են ամսական կտրվածքով 135000 դրամ՝ ներառյալ հարկերը:

- Գիտության ոլորտի ենթակառուցվածքների, գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման մրցույթ: Արդյունքում հաղթել է 5 կազմակերպություն, տրամադրվել է 260700,0 հազ. դրամ:

- «CANDLE» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտի «AREAL» գծային արագացուցիչ վրա իրականացվելիք գիտական թեմաների մրցույթ: Ստացվել էր 14 հայտ: Արդյունքում 5 դրամաշնորհ է տրամադրվել 3-4 անձից բաղկացած գիտահետազոտական խմբերին:

- «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ «CYCLONE 18/18» ցիկլոտրոնի վրա իրականացվելիք գիտական թեմաների մրցույթ: Ստացվել է 11 հայտ:

2.2. Կազմակերպվել է 2013 թ. վերջին հայտարարված մրցույթների հայտերի գիտական փորձաքննությունը, ամփոփվել են արդյունքները.

- ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության միջազգային մրցույթ: Արդյունքում ֆինանսավորվել է 17 ծրագիր (ընդունվել էր 35 հայտ):

- ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Ռուսաստանյան հումանիտար գիտական հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության միջազգային մրցույթ: Արդյունքում ֆինանսավորվել է 8 ծրագիր (ընդունվել էր 14 հայտ):

- Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության մրցույթ: Մրցույթի արդյունքում ֆինանսավորվել է 28 ծրագիր (ստացվել էր 99 հայտ):

- կազմակերպվել է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում թվով 159 գիտական թեմաների տարեկան (ընթացիկ) հաշվետվությունների ծրագրերի փորձաքննությունը: Բոլոր թեմաները երաշխավորվել են հետագա ֆինանսավորման:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով տրամադրվել է 1515690.5 հազ. դրամ:

2.3. Մրցույթների կազմակերպման գործընթացում կատարվել են հետևյալ բարեփոխումները.

«ԿԳՆ գիտության պետական կոմիտեի մրցույթների հայտերի և հաշվետվությունների ընդունման էլեկտրոնային համակարգի կատարելագործում համակարգի միջոցով առցանց ընդունվում են կոմիտեի հայտարարած միջազգային և ներպետական մրցույթների հայտերն ու հաշվետվությունները, տեղադրվում են հայտերի ու հաշվետվությունների փորձաքննության արդյունքները: Համակարգում արդեն մոտ 1500 գիտաշխատող ունի իր անձնական էջը, որոնցում ֆիքսվում են կոմիտեի հայտարարած մրցույթներին նրանց մասնակցության ընթացքն ու արդյունքները:

Գիտական փորձաքննության առցանց իրականացում. այսուհետ Կոմիտեի հայտարարած մրցույթների հայտերը գնահատող փորձագետները նույնպես աշխատելու են առցանց:

3. Ավարտվել է «CANDLE» նախագծի առաջին փուլը: Մայիս-հունիս ամիսներին գործարկվել է «AREAL» գծային արագացուցիչը: Հուլիսի 22-ին տեղի է ունեցել «AREAL» արագացուցչի բացման պաշտոնական արարողությունը: 2014 թ. հոկտեմբերին ավարտվել են բժշկակենսաբանական և միկրոտեխնոլոգիաների գծով փորձարարական կայաններով «DELTA» լաբորատորիայի ստեղծման աշխատանքները:

4. Իրականացվել են պետական բյուջեում ընդգրկված թվով 12 գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրեր՝ ընդհանուր՝ 1675270.3 հազ. դրամ ֆինանսավորման ծավալով:

5. Կոմիտեի միջոցով ֆինանսավորվել է՝ երիտասարդ գիտնականների 9 դպրոց (ընդհանուր՝ 3000,0 հազ. դրամ), 43 գիտական միջոցառում (ընդհանուր՝ 23280,0 հազ. դրամ):

6. Պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման ծրագրերի շրջանակներում իրականացվել են շուրջ 250 միջազգային գործուղումներ:

7. Գիտական հրատարակումների և գիտության մասսայականացման աջակցության նպատակով ֆինանսավորում է տրամադրվել թվով 8 գիտական աշխատության համար՝ 18755.9 հազ. դրամ ընդհանուր ծավալով:

8. Թարմացվել է Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում կամ թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողների տվյալների շտեմարանը: 2014 թ. դեկտեմբերի դրությամբ շտեմարանը պարունակում է գիտության 573 դոկտորների ու 1908 թեկնածուների տվյալներ:

9. 50000,0 հազ. դրամ է տրամադրվել Հայաստանի երիտասարդական հիմնադրամին երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրեր ֆինանսավորելու նպատակով: Եվս 50000,0 հազ. դրամ կտրամադրվի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ՀՀ պետական բյուջեում համապատասխան վերաբաշխման թույլտվության դեպքում:

10. Միջազգային համագործակցության շրջանակներում իրականացվել են հայ-ֆրանսիական, հայ-գերմանական, հայ-իտալական, հայ-ռուսական, հայ-բելառուսական համատեղ ծրագրեր:

11. Նորացվել է www.scs.am կայքը, որով բարելավվել են տեղեկատվության տրամադրման և հասարակայնության հետ կապի պահպանման եղանակները: